

Armenia | Tax | 20 JUNE 2018



## Հարկային նորություններ

Հունիս 2018 թ.  
Եղի՛ր տեղեկացված

Armenian Tax update

June 2018  
Be in the know

**«Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ Օրենք**

**ՀՕ-327-Ն**

Ընդունվել է 23.05.2018 թ.

Ուժի մեջ է 14.06.2018 թ.

Վավերացվել է 2017 թվականի հուլիսի 25-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան:

**The RA Law "On ratification of the Convention between the Government of the Republic of Armenia and the Government of the State of Israel on Prevention of Double Taxation of Income and Property and Prevention of Avoidance of Tax".**

**AL-327-N**

Adopted 23.05.2018

Enforced 14.06.2018

"The Convention between the Government of the Republic of Armenia and the Government of Israel on the avoidance of double taxation and the prevention of tax evasion" dated on July 25, 2017 has been ratified.

**«Հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿՈ**

**N 613-Ն**

Ընդունվել է 01.06.2018 թ

Ուժի մեջ է 23.06.2018 թ

Ուժը կորցրած են ճանաչվել մինչև ՀՀ Հարկային Օրենսգրքի ուժի մեջ մտնելը հարկային հարաբերությունները կարգավորող օրենքների հետ առնչվող մի շարք կառավարության որոշումներ, մասնավորապես՝

- 1998 թվականի օգոստոսի 25-ի «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 525 որոշումը,
- 1998 թվականի նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացնող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշումը,
- 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1408-Ն որոշումը,
- 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգերը հաստատելու մասին» N 1504-Ն որոշումը,
- 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Հայաստանի Հանրապետության գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» N 1398-Ն որոշումը.
- 2008 թվականի ապրիլի 17-ի «Որոշ ապրանքատեսակների ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, այդ տվյալների ճշգրտման առավելագույն սահմանները և ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը սահմանելու մասին» N 458-Ն որոշումը և այլն:

**RA Government Decree "On repealing a number of decisions of the Government of the Republic of Armenia"**

**N 613-N**

Adopted 01.06.2018

Enforced 23.06.2018

A number government decrees related to the tax laws effective before the enforcement of the RA Tax Code have been repealed, particularly:

- N 525 Decree dated on August 25, 1998 "On establishing the requirements for the expense verification documents, as well as the procedure of filing those documents";
- N 753 Decree dated on November 27, 1998 "On establishing maximum allowable amounts for several types of expenses for the deducting from the taxable income for the purposes of taxation";
- N 1408-N Decree dated on October 8, 2003 "On establishing the order of implementation of cash transactions";
- N 1504-N Decree dated on November 11, 2010 "On establishing the order of issuing tax invoices, generation of series and number for tax invoices";
- N 1398-N Decree dated on October 7, 2003 "On application of certain provisions of the current international agreements on exclusion of double taxation of income and property and prevention of tax evasion";
- N 458 Decree dated on April 17, 2008 "On establishing the order determining the adjusted data, maximum limits for the adjustment and the unit price for the goods, for the purposes of determining VAT taxable turnover for a number of goods', etc.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿՈ**

**N 614-Ն**

Ընդունվել է 01.06.2018 թ

Ուժի մեջ է 23.06.2018 թ

Ուժը կորցրած են ճանաչվել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հետ առնչվող մի շարք կառավարության որոշումներ:

**RA Government Decree "On repealing a number of decisions of the Government of the Republic of Armenia"**

**N 614-N**

Adopted 01.06.2018

Enforced 23.06.2018

A number of Government Decrees related to the RA law "On Funded Pensions" have been repealed.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿՈ**

**N 616-Ն**

Ընդունվել է 01.06.2018 թ

Ուժի մեջ է 23.06.2018 թ

Ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1676-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը և N 4 հավելվածը, որոնցով սահմանվում էր ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքը դիմումի հիման վրա փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով տվյալների սուբյեկտին տրամադրելու կարգը:

**RA Government Decree "On making amendments to the RA Government Decree N 1676-N dated on December 20, 2012"**

**N 616-N**

Adopted 01.06.2018

Enforced 23.06.2018

The 4<sup>th</sup> sub-paragraph and the N4 Appendix of the Decree N 1676-N, dated on December 20, 2012, "On the implementation of the RA Law "On Personified registration of income tax and social payments"", whereby the procedure of providing a personal account statement based on a person's application, have been repealed.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1321-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿՈ  
N 647-Ն**

Ընդունվել է 08.06.2018 թ  
Ուժի մեջ է 16.06.2018 թ

Փոփոխվել և լրացվել են ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցման կարգը սահմանելու մասին» N 1321-Ն որոշման մի շարք դրույթներ:

**RA Government Decree "On making amendments and additions to the RA Government Decree N 1321-N dated on October 5, 2017".**

**N 647-N**

Adopted 08.06.2018  
Enforced 16.06.2018

A number of provisions of RA Government Decree N 1321-N on "On defining the order of compensation of income tax paid by individuals in the amount of interests payments for mortgage loans", dated on October 5, 2017, has been amended and supplemented.

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1257-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿՈ  
N 648-Ն**

Ընդունվել է 08.06.2018 թ  
Ուժի մեջ է 12.06.2018 թ

Սահմանվել են ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթեր դուրս գրվելու դեպքերը, մասնավորապես՝

- ՀՀ տարածքից ապրանքի արտահանման դեպքերում.
- ապրանքի մատակարարման վայրը Հայաստանի Հանրապետությունից դուրս համարվելու դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվարկային փաստաթուղթ դուրս գրողը և ստացողը հաշվառված են հարկային մարմնում.
- կապի կամ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման պատճառով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու անհնարինության դեպքերում

**RA Government Decree "On making amendments and additions to the RA Government Decree N 1257-N dated on October 5, 2017".**

**N 648-N**

Adopted 08.06.2018  
Enforced 12.06.2018

The cases of issuing invoices non-electronically have been established, in particular:

- exporting goods outside the RA territory;

- the place of supply of goods is outside RA, except for those cases, when both the issuer of the invoice and the recipient are registered in the tax body;
- in case of impossibility of issuing an electronic invoice due to failure of the communication system or the tax body's software system.

**«Ավելացված արժեքի հարկով հարկման նպատակով տարան որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա որակելու չափանիշները սահմանելու մասին» ՀՀ ԿՈ**

**N 644-Ն**

Ընդունվել է 08.06.2018 թ

Ուժի մեջ է 21.06.2018 թ

Սահմանվել է ԱԱՀ-ով հարկման նպատակով տարան որպես շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարա որակելու չափանիշները 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների վրա, ինչպես նաև սահմանվել է ապրանք արտադրող հարկ վճարողի կողմից մինչև ապրանքների օտարումը տարայի յուրաքանչյուր տեսակի համար հարկ վճարողի ղեկավարի կողմից հաստատվող հայտարարության ձևը: Սահմանվել է նաև, որ մինչև որոշումն ուժի մեջ մտնելու օրը ներառող ժամանակահատվածների համար հայտարարությունը կարող է լրացվել մինչև որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ:

**RA Government Decree "On establishing the criteria for qualifying containers as reusable for the purposes of taxation with VAT"**

Adopted 08.06.2018

Enforced 21.06.2018

For transactions occurred after January 1, 2018, the criteria for qualifying containers as reusable and the form of application to be submitted by the producer of goods for each type of container before the sales of goods have been established. It has also been established that, for the periods covering the date of the enforcement of the Decree, the declaration may be filed within 20 days following the date of the enforcement of the decision.

**«Այն ոլորտների ցանկը սահմանելու մասին, որոնցում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից հիմնական միջոցների տեղափոխության դեպքում ուղեկցող փաստաթղթերի առկայությունը պարտադիր չէ» ՀՀ ԿՈ**

**N 649-Ն**

Ընդունվել է 08.06.2018 թ

Ուժի մեջ է 21.06.2018 թ

Սահմանվել է Շինարարության ոլորտի մի շարք գործունեության տեսակներ, որոնց շրջանակներում հիմնական միջոցների տեղափոխության դեպքում ուղեկցող փաստաթղթերի առկայությունը պարտադիր չէ:

**RA Government Decree "On defining a list of those sectors in which the presence of accompanying documents are not mandatory in case of movement of fixed assets".**

**N 649-N**

Adopted 08.06.2018

Enforced 21.06.2018

It has been defined that, for a number of activities in construction sector the presence of accompanying documents is not mandatory in case of moving the fixed assets.

**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Օրենք**

**ՀՕ-338-Ն**

Ընդունվել է 21.06.2018 թ

Ուժի մեջ է 01.07.2018 թ

Կատարվել են մի շարք նշանակալի փոփոխություններ ՀՀ Հարկային Օրենսգրքում, մասնավորապես՝

- Ոչ կյուրթական ակտիվի օգտագործման տրամադրումը, համարվում է ծառայության մատուցում, հետևաբար ԱԱՀ հարկման օբյեկտ.
- Հարկային տարվա ընթացքում համախառն եկամտի բացակայության դեպքում ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի նվազեցման սահմանափակում է ավելացվել՝ այդ հարկային տարվա ընթացքում հաշվեգրված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հանրագումարի մեկ տոկոսի չափով
- 2019թ. հունվարի 1-ից սկսած չի գործի շահութահարկի նվազեցված դրույթաչափերի արտոնությունը
- Ներկայացուցչական ծախսերի, ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի հաշվին ֆիզիկական անձանց կողմից ստացվող դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտների՝ Օրենսգրքով սահմանված չափերը գերազանցող գումարների նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 20% դրույթաչափով և ներառվում է հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում
- Ֆիզիկական անձանց եկամտային հարկի մասով եկամուտ չեն համարվում բանկերում և վարկային կազմակերպություններում հաշվառված՝ ֆիզիկական անձանց (բացառությամբ որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար վարկ ստացած ֆիզիկական անձանց) նկատմամբ ձևավորված և մինչև 2018 թվականի մայիսի 31-ը անհուսալի ճանաչված ակտիվների մասով մինչև դրանց անհուսալի ճանաչելը հաշվարկված և նախկինում հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցված՝ տվյալ ֆիզիկական անձին ներված (այդ թվում՝ մասնակի) տույժերի և (կամ) տուգանքների գումարները.
- Կրկնակի իջեցվել են մարդատար ավտոտրանսպորտային միջոցների համար նախատեսված բնապահպանական հարկի դրույթաչափերը.
- Փոխվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար նախատեսված տուգանքի չափը՝ նախկինում 60,000-ից մինչև 600,000 ՀՀ դրամի փոխարեն դառնալով 250,000 ՀՀ դրամ, անկախ չձևակերպված դեպքերի քանակից:
- Վերացվել են հսկիչ դրամարկղային մեքենաների առկայության և կիրառության մասով սահմանված տուգանքների՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ հանրային սննդի կետերին վերաբերող բացառությունները:
- Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գործողության սկիզբը հետաձգվել մինչև 2020 թվականի հունվարի 1,
- Տրանսֆերային գնագոյացման վերաբերյալ կարգավորումները գործողության սկիզբը հետաձգվել է մինչև 2020 թվականի հունվարի 1:

**RA Law "On making amendments and additions to the RA Tax Code and to the RA Law AL-266-N, dated on 21 December, 2017, "On making amendments and additions to the RA Tax Code"".**

**AL-338-N**

Adopted 21.06.2018

Enforced 01.07.2018

A number of notable changes have been made in the RA Tax Code, particularly:

- The provision of intangible asset for use is considered as a service provision, consequently it is subject to taxation with VAT
- In case of absence of the gross income during the taxable year, the limit for expenses related to assistance to individuals, meal, organizing social-cultural events for them and other similar expenses is in amount of 1% from the total salaries and equivalent payments calculated for them in the taxable year.
- Starting from January 1, 2019, the privilege of reduced profit tax will not be applied
- The monetary and non-monetary incomes of individuals, related to representative expenses, expenses related to assistance, meal, organizing social-cultural events for them and other similar expenses, which are above the maximum limits established by the Tax Code, will be subject to income tax at 20% rate, and shall be included in the income tax report for the month of April that is following the taxable year.
- For the purposes of personal income tax, the concessions of fines and penalties of individuals (except for those who have been granted a loan as private entrepreneurs and notaries) payable to banks with regards to assets classified as irrecoverable as of May 31, 2018, are not considered as an income.
- The rates of environmental taxes for cars have been decreased by two times
- The amount of the penalty provided for non-registration of hiring of an employee in accordance with the order established by the RA legislation, has been changed: from AMD 60,000 to AMD 600,000 previously, it has become AMD 250,000 per case, regardless of the number of cases.
- The exception from the penalties related to the availability and application of the controlling cash machines by the taxpayers subject to patent tax has been removed,
- The application of tax on immovable property and property tax on vehicles has been delayed to January 1, 2020,
- The start of the application of the regulations related to transfer pricing has been delayed to January 1, 2020.

**«Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ Օրենք****ՀՕ-339-Ն**

Ընդունվել է 21.06.2018 թ

Ուժի մեջ է 30.06.2018 թ

Անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձինք ազատվում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ իրականացված ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար հաշվարկված ավելացված արժեքի հարկի մասով հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից, եթե 90 աշխատանքային օրվա ընթացքում, կամ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կատարել են հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարումը:

**RA Law "On establishing tax privileges"****AL-339-N**

Adopted 21.06.2018

Enforced 30.06.2018

Individuals who are not considered as private entrepreneurs are exempt from outstanding penalties and fines in relation to VAT arisen on the transactions incurred by 31 December

2016 that had been considered as supply of goods, if within 90 days or until the enforcement of this law have paid the outstanding VAT amount.

**«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ Օրենք**

**ՀՕ-337-Ն**

Ընդունվել է 21.06.2018 թ

Ուժի մեջ է 01.07.2018 թ

Սահմանվել է որ, մինչև եկամտային հարկով հարկման բեռի նվազեցումը անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար նախատեսված սոցիալական վճարի կեսը, սակայն ոչ ավել, քան 12500 դրամ, կատարում է պետությունը:

**RA Law "An Amendments to RA Law on Funded Pensions"**

**AL-327-N**

Adopted 21.06.2018

Enforced 01.07.2018

It has been established that until the reduction of the personal income tax burden of individuals, who are not considered as private entrepreneurs and notaries, the half of the social payments provided for them, but not more than AMD 12500, is made by the State.

**Տեղեկագրում ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք կապվել մեր հայաստանյան Դելոյթ ընկերության մասնագետների հետ.**

**If you have any questions regarding the information provided in this newsletter, please contact one of the professionals at our Deloitte office in Armenia:**

**Սուրեն Դալումյան**  
**Suren Ghalumyan**

**Պարսամ Գյուլազյան**  
**Parsam Gyulazyan**

**Հարկային մենեջեր**  
**Tax manager**

**Ավագ հարկային խորհրդատու**  
**Senior tax consultant**

[sghalumyan@deloitte.am](mailto:sghalumyan@deloitte.am)

հեռ.+374 (10) 52 65 20 (և. 6050)

[pgyulazyan@deloitte.am](mailto:pgyulazyan@deloitte.am)

հեռ.+374 (10) 52 65 20 (և. 6016)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6050)

Call +374 (10) 52 65 20 (ext. 6016)



[deloitte.am](http://deloitte.am)

Deloitte refers to one or more of Deloitte Touche Tohmatsu Limited, a UK private company limited by guarantee ("DTTL"), its network of member firms, and their related entities. DTTL and each of its member firms are legally separate and independent entities. DTTL (also referred to as "Deloitte Global") does not provide services to clients.



Please see [www.deloitte.com/about](http://www.deloitte.com/about) for a more detailed description of DTTL and its member firms.

Deloitte provides audit, consulting, financial advisory, risk management, tax and related services to public and private clients spanning multiple industries. Deloitte serves four out of five Fortune Global 500® companies through a globally connected network of member firms in more than 150 countries bringing world-class capabilities, insights, and high-quality service to address clients' most complex business challenges. To learn more about how Deloitte's approximately 244,000 professionals make an impact that matters, please connect with us on [Facebook](#), [LinkedIn](#), or [Twitter](#).

This communication contains general information only, and none of Deloitte Touche Tohmatsu Limited, its member firms, or their related entities (collectively, the "Deloitte Network") is, by means of this communication, rendering professional advice or services. Before making any decision or taking any action that may affect your finances or your business, you should consult a qualified professional adviser. No entity in the Deloitte Network shall be responsible for any loss whatsoever sustained by any person who relies on this communication.

© 2018 Deloitte & Touche LLC. All rights reserved.